

ԺԱՄՆ Է ՀԻՄԱ

Ժամն է հիմա աւետարներ հրեշտակին
Եւ աղօթող զանգերուն .
Մոմերն իրար հեշտ հըպումով կը վառին ,
Ինչպէս շաբաթ իրիկուն :

Հորիզոններն ըստուերներով կը բեցուին ,
Եկեղեցին՝ լոյսերով :
Ժամն է հիմա որ ճաճանչներն ալ հանդէին ,
Լեցուին լիճերն աստղերով :

Ժամն է որ զան աչքերուն՝ կոյս երազներ
Դըրախտներէն անանուն ,
Զըլլայ հառաչ , սրտի տըրտի վշտամբեր ,

Մայր ունենայ որբութիւնն :
Ժամն է հիմա որ հողիները մոռնան ,
Աշխարհ , արեւ , կեանք ունայն :

ԽՆԳՐԱՆՔ

Պիտի խնդրեմ ես Աստուծմէ որ ինձ տայ
Աստղիկ մը նոր ըստեղծուած ,
Մոմի նրման՝ որ ժամին մէջ կը ցոլայ ,
Ըլլայ փոքրիկ , երկիւղած :

Ամէն գիշեր պիտի ելլեմ լեռնէ լեռ ,
Մօտ ըլլալու աւելի .
Պիտի պատմեմ ես երազներ ու տենչեր
Ինչպէս հողի առ հողի :

Պիտի պարզեմ տըղու նրման ամբողջ սէրս
Եւ իմ ցաւերս անհամար ,
Թէ գիւրարեկ հողէ շինուած մարդ եմ ես ,

Սիրտըս կոտորած մի դոհար :
Պիտի խնդրեմ որ նա ցոլայ յաւիտեան ,
Թէ զիս դընեն գերեզման :

ԶԵՄ ՓԱՓԱՔԻՐ

Զեմ փափաքիր կոխել սեմերն արքունի ,
Ոչ պարտէղներ հոտաւէտ ,
Քանի ամէն օր արշալոյս կը բացուի
Ինծի համար , ինծի հետ :

Կը լըսեմ ես անոյշ բարբառն արեւուն
Կը զգամ անոր հեշտ դըղուանք .
Սրտիս համար չըկայ ուրիշ բերկրութիւն՝
Քան աստուան երազանք :

Կը զգա՞յ արդեօք երջանկութիւնս ուրիշ մարդ .
Վերեւն երկինք ու վարն ես ,
Ես աշխարհիս դարնան համար խոնարհ զարդ ,

Եւ ծաղիկներ՝ իմ տենչերս :
Զեմ փափաքիր ոսկի սեմերն արքունի .
Ես կարօտ եմ անհունի :

ԱՓՐԻԿԵԱՆ ՊԱՏԿԵՐ

Պատկառուին իր ծաղիկներով գեղնորակ
Սփռեց վըրաս հովանին ,
Ինչպէս կ'առնէ մայրն իր տըղան կուրծքին տակ
Որ մօտ ըլլայ իր սրտին :

Օծուած էր նա արեւելեան գերդ դըշխոյ
Նարդոսական բոյրերով .
Ո՛հ , ինչ հեշտ ես , ով ափրիկեան ևրեկոյ
Սիւքերուդ դաղջ թեւերով :

Մնդուս ըստուերը կապոյտէն ալ թեթեւ՝
Կարծես փոքրիկ գիշեր մ'էր ,
Աստղերու տեղ ծաղիկներն իր լուսաթեւ

Կ'իջնէին մինչ իմ ուսեր :
Ծաղիկներու ժանեակներէն թաւշային ,
Գաղտ կը նայէր մեզ արփին :
Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ